**ИСТОРИЯ**

# Ազգային պետականության հայեցակարգերը սահմանադրական նախագծերում և Հայաստանի պետական համակարգի վերափոխումը 1995 թ.

***Զաքարյան Լիլիթ Ս.***
*պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,*
*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող (Երևան, ՀՀ)*
https://orcid.org/0009-0005-4497-5410
lilitzakaryan@gmail.com

**ՀՏԴ՝** 941 (479.25); **EDN:** HCONDK
**DOI:** 10.58587/18292437-2026.5-113
**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** ազգային պետականություն, սահմանադրական նախագծեր, ՀՀ Գերագույն խորհուրդ, 1995 թ. Սահմանադրություն, պետական համակարգ

## Концепции национальной государственности в конституционных проектах и трансформация государственной системы Армении в 1995 г.

***Закарян Лилит С.***
*кандидат исторических наук, доцент, старший научный сотрудник,*
*Институт истории НАН РА (Ереван, РА)*

**Аннотация.** В статье на основе архивных материалов и конституционных проектов исследуются концепции национальной государственности, сформировавшиеся в первые годы независимости Армении, и их отражение в конституционном процессе 1992–1995 гг. Анализируются дискуссии в Верховном совете Республики Армения и Конституционной комиссии, а также проекты, представленные отдельными авторами, политическими силами и партиями. Одновременно конституционные дискуссии выявили напряженность между конституционным закреплением национальных целей и необходимостью сохранения политической и дипломатической гибкости независимого государства.
В исследовании утверждается, что Конституция связывает национально-исторический компонент с фундаментальными принципами и национальными целями, закреплёнными в Декларации независимости, при этом организуя государственную власть согласно принципам народного суверенитета, разделения властей, верховенства закона и различия между государственным управлением и местным самоуправлением.
**Ключевые слова и словосочетания:** национальная государственность, конституционные проекты, конституционный процесс, Верховный Совет Армении, Конституция 1995 г., государственная система

## Concepts of National Statehood in Constitutional Drafts and the Transformation of Armenia's State System in 1995

***Zakaryan Lilit S.***
*Candidate of Historical Sciences, Associate Professor,*
*Senior Researcher at the Institute of History, NAS RA (Yerevan, RA)*

**Abstract.** The article examines the concepts of national statehood that emerged during the first years of Armenia's independence and their reflection in the constitutional process of 1992–1995, based on archival materials and constitutional drafts. It analyzes the debates in the Supreme Council of the Republic of Armenia and the Constitutional Commission, as well as draft constitutions submitted by individual authors, political forces, and parties.
The study argues that the Constitution linked the national-historical component to the fundamental principles and national objectives enshrined in the Declaration of Independence, while organizing state power according to the principles of popular sovereignty, separation of powers, the rule of law, and the distinction between state administration and local self-government.
**Keywords & phrases:** national statehood, constitutional drafts, constitutional process, Supreme Council of Armenia, Constitution of 1995, state system

### Ներածություն

Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումը XX դարի վերջին տեղի էր ունենում ազգային-ազատագրական շարժման և պատմական հիշողության վերակենդանացման պայմաններում: Անկախությունից հետո օրակարգում էր ոչ միայն նոր քաղաքական և իրավական համակարգի ստեղծումը, այլև այն

հարցը, թե ինչպիսի պետություն պետք է լիներ անկախ Հայաստանը և ինչպես պետք է հիմնական օրենքում արտացոլվեին հայ ժողովրդի պատմական փորձը, ազգային ինքնությունը և համազգային նպատակները:

Այս խնդիրը հատկապես դրսևորվեց 1992–1995 թթ. սահմանադրական նախագծերի մշակման և դրանց շուրջ ՀՀ Գերագույն խորհրդում ու հանձնաժողովներում ծավալված բանավեճում: Նախագծերում արտահայտվում էին ազգային պետականության տարբեր ընկալումներ՝ կապված պատմական հիշողության, Հայոց ցեղասպանության, Արցախի, Սփյուռքի, Հայ դատի, ազգային մշակույթի և լեզվի հետ: Միաժամանակ քննարկվում էր ազգային նպատակների սահմանադրական ամրագրման և պետության քաղաքական ու դիվանագիտական ճկունության պահպանման հարաբերակցությունը:

Հոդվածի նպատակն է՝ արխիվային հարուստ նյութի հիման վրա, համադրական և բովանդակային վերլուծության մեթոդներով բացահայտել սահմանադրական նախագծերում արտահայտված ազգային պետականության հայեցակարգերը և դրանց ազդեցությունը 1995 թ. Սահմանադրությամբ ամրագրված պետական համակարգի վրա:

**Ազգային պետականության հիմնադրույթների սահմանադրականացման շուրջ քննարկումները Գերագույն խորհրդում 1992–1995 թթ.**

1992–1995 թթ. Սահմանադրության մշակման գործընթացը ոչ միայն պետական կառավարման և իշխանությունների փոխհարաբերությունների սահմանադրական ամրագրման, այլև նորանկախ պետության բնույթի ու գաղափարական հիմքերի ձևավորման փուլ էր: Քննարկումների առանցքում էր այն հարցը, թե ինչ ձևով պետք է հիմնական օրենքն արտահայտեր հայ ժողովրդի ազգային ինքնությունը, պատմական հիշողությունը, համազգային նպատակներն ու Սփյուռքի հետ կապը: Հատկանշական է, որ ներկայացված նախագծերի մեծ մասում այս կամ այն չափով առկա էր ազգային բաղադրիչը, սակայն դրա բովանդակությունը և սահմանադրական նշանակության ընկալումը տարբեր էին: Մի դեպքում այն հիմնականում դիտարկվում էր որպես պետության պատմական ու ազգային ինքնության արտահայտություն, մեկ այլ դեպքում՝ որպես պետականության նպատակների և արտաքին քաղաքական առաջնահերթությունների հիմք, իսկ որոշ նախագծերում ազգային գաղափարները միավորվում էին պետական կառուցվածքի և իրավական կարգավորման հետ: Այս առումով նախագծերի վերլուծությունը թույլ է տալիս դիտարկել ազգային պետականության վերաբերյալ ձևավորված ընդհանուր պատկերացումները: Դրանք, չնայած առանձին շեշտադրումների տարբերությանը, ներառում էին չորս հիմնական բաղադրիչ՝ պատմական-ժառանգական, ազգային-քաղաքական, տարածքային-հայրենատիրական և համազգային-համահայկական: Այս բաղադրիչների համադրությունը վկայում է, որ սահմանադրական նախագծերում պետությունը ընկալվում էր ոչ միայն որպես իշխանության կազմակերպման իրավական համակարգ, այլև որպես ազգային ինքնության, պատմական ժառանգության և համազգային նպատակների ինստիտուցիոնալացման միջոց:

Ազգային բաղադրիչը սահմանադրական կարգավորման մեջ արտացոլելու առաջարկներ էին հնչում դեռևս հանձնաժողովի աշխատանքի վաղ փուլում: Օրինակ, 1992 թ. հոկտեմբերի 23-ի քննարկման ժամանակ ԳԽ պատգամավոր Գ. Ավագյանն առաջարկում էր հաշվի առնել ազգային առանձնահատկություններն ու Սփյուռքի առկայությունը: Առաջարկվում էր երկպալատ խորհրդարան, որի պալատներից մեկը կներկայացներ Հայաստանի հայությանը, մյուսը՝ Սփյուռքը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով [**1**, էջ 9]: Նմանատիպ առաջարկներ հաճախ էին հնչում:

Ազգային պետականության գաղափարն արտահայտված էր նաև Ֆ. Խառատյանի նախագծում [**2**]: Նախագծի նախաբանում Հայաստանի պետականության վերականգնումը ներկայացվում էր հայ ժողովրդի ինքնուրույն պետականություն ունենալու դարավոր ձգտումների շարունակություն, իսկ Սահմանադրությունը՝ որպես «հասարակական դաշինք» ազգի և պետության միջև [**2**, էջ 3]: Հայաստանը բնորոշվում էր որպես «բոլոր հայերի հայրենիք» և «համազգային ընդհանուր պետական տուն» [2, էջ 5]: Նախագծում հիշատակվում էր Հայոց ցեղասպանությունը, նախատեսվում էր խրախուսել հայերի ներգաղթը, իսկ քաղաքացիությունը կապվում էր նաև ազգային պատկանելության հետ [**2**, էջ 7]: Նախատեսվում էր չճանաչել առանց ՀՀ մասնակցության կնքված միջազգային պայմանագրերը, որոնցով օտարվել էին «Հայաստան աշխարհի» տարածքները [**2**, էջ 5]:

Պատմական պետականության ժառանգականության գաղափարը արտահայտված էր Հենրիկ Խաչատրյանի նախագծում [**3**]: Նախաբանում առաջարկվում էր ընդգծել հայ ժողովրդի պետականության հնագույն արմատները, պետականության կորստի հանգամանքը, Հայոց ցեղասպանությունը և 1918 թ. մայիսի 28-ի պետականության վերականգնումը՝ Երրորդ Հանրապետության լեգիտիմությունը կապելով պետականության նախորդ փուլերի հետ:

Նույն գաղափարական շրջանակում էր ԳԽ պատգամավոր Մեխակ Գաբրիելյանի, Հայկ Խաչատրյանի և Վաղինակ Ղազարյանի մշակած «Հայաստանի դաշնակցային հանրապետության

Սահմանադրության նախագիծը» [**4**, էջ 151]: Դրա նախաբանում հայ ժողովրդի պետականության արմատները հասցվում էին մինչև Ք.ա.երրորդ հազարամյակ, իսկ անկախությունը ներկայացվում էր որպես «Աստծո կամքով Հայաստանի տասներորդ մասում» անկախ պետականության վերականգնում:

Պատմական իրավունքի սահմանադրականացման տարբերակ էր առաջարկվում նաև Վլադիմիր Նազարյանի «ՀՀ Սահմանադրության կոնցեպցիա» գրքույկում [**5**]: Հեղինակը առաջարկում էր կա՛մ Սահմանադրությամբ ամրագրել հայ ժողովրդի՝ «իր ամբողջական հայրենիքն ունենալու բնական և անօտարելի իրավունքը» և չեղյալ հայտարարել այդ իրավունքը ոտնահարող միջազգային պայմանագրերը, կա՛մ պաշտոնապես հրաժարվել Հայ դատից և պահանջատիրությունից [**5**, էջ 36]:

Ազգային պետականության պատմական, համահայկական և ժողովրդավարական բաղադրիչների համադրումը նկատելի էր 1993 թ. սեպտեմբերի 9-ին ներկայացված վեց կուսակցությունների՝ «վեցյակի» նախագծում [**6**]: Նախաբանում հայ ժողովուրդը ներկայացվում էր որպես իր բնօրրանում հազարամյակներ շարունակ ապրած ժողովուրդ, որը վերականգնում է ազգային պետականությունը և ձգտում իրականացնել «*համայն հայության՝ ազատ, անկախ և միացյալ Հայաստանում համախմբվելու*» իդեալը: Նախագիծը նախատեսում էր նաև Հայ դատի լուծմանն ուղղված պետական քաղաքականություն, Ցեղասպանության ճանաչումը՝ որպես պետական նպատակ, իսկ Հայ դատից հրաժարվելուն ուղղված քարոզչության արգելք [**6**, էջ 3]:

Ազգային գաղափարի իրավականացման մեկ այլ օրինակ էր ՍԻՄ-ի 1993 թ. սեպտեմբերի 8-ի նախագիծը [**9**]: Դրանում, ինչպես և «վեցյակի» նախագծում, ամրագրվում էին «Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի» գաղափարը, պատմական հայրենիքի ամբողջ տարածքն ընդգրկող միասնական պետության մեջ համայն հայության միավորման ձգտումը: Նախագծում ազգային պետականության գաղափարը տարածվում էր գրեթե բոլոր մասերի վրա. նախատեսվում էր առանձին մաս՝ «Հայ ազգ, հայ անհատ և հայոց պետականություն» խորագրով, իսկ առաջին գլուխը կոչվում էր «Հայոց ազգային պետականություն»: Նախատեսվում էր արգելել ազգուրացությունը, Հայ դատից հրաժարվելը և ՀՀ տարածքների այլ պետություններին զիջելը: Հայ Առաքելական եկեղեցուն վերապահվում էր պետական հովանավորություն, իսկ վարչատարածքային բաժանման համար առաջարկվում էին պատմական անվանումներ՝ Արարատ, Արցախ, Գուգարք, Շիրակ, Սևան և Ուտիք [**9**, էջ 27]:

Հայաստանի կոմունիստական կուսակցության 1993 թ. սեպտեմբերի 22-ի նախագծում ևս ընդգծվում էին հայոց պետականության պատմական փորձը և պատմական հայրենիքի տարածքի մի մասում ժողովրդավարական, իրավական պետություն կառուցելու ձգտումը [**10**]:

Ազգային-պատմական բաղադրիչի սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունն ընդգծվել էր նաև ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի փորձագիտական եզրակացությունում, ուր առաջարկվում էր Սահմանադրության նախաբանում հիշատակել «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը [**8**, էջ 1]: Միաժամանակ Սահմանադրական հանձնաժողովի անդամներ Յու. Սարգսյանն ու Հ. Գևորգյանը քննադատում էին Սահմանադրական հանձնաժողովի կողմից ներկայացվող նախագիծը՝ նշելով, որ դրանում բավարար չափով չի արտահայտվում պետության ազգային բնույթը, բացակայում է «հայ ժողովուրդ» հասկացությունը, հստակ չէ վերաբերմունքը Սփյուռքի նկատմամբ, ինչպես նաև բավարար չափով չեն արտացոլված մշակույթի նկատմամբ պետական հոգածությունն ու տնտեսական անկախության խնդիրը [**12**, էջ 37; **7**, էջ 7]:

Նշենք, որ Հայաստանը միակ երկիրը չէր, որտեղ սահմանադրության տեքստում ցանկանում էին արտացոլել ազգային-պատմական արժեքներն ու պատմական փորձը: Սահմանադրություններում և դրանց նախաբաններում դրսևորվում էին երկու՝ հաճախ փոխկապակցված միտումներ՝ «ազգային վերածնունդը» և արևմտականացման ձգտումը [**13**, էջ 133]: Հաճախ սահմանադրական նախաբանները, արտահայտում են պետության հիմնական արժեքային կողմնորոշումները, ինքնաընկալումը, պետական ու քաղաքական-իրավական համակարգի իդեալները [**13**, էջ 133]: Ազգային-պատմական բաղադրիչի նման արտացոլում կարելի է տեսնել, օրինակ, Իռլանդիայի Հանրապետության Սահմանադրության մեջ, որտեղ շեշտադրվում են ժողովրդի պատմական պայքարն ու ազգային ինքնությունը [**15**]: Նույն միտումը դրսևորվում է նաև Լեհաստանի Սահմանադրության նախաբանում, որտեղ հիշատակվում են նախնիները, անկախության համար նրանց պայքարը, ազգային մշակույթի ժառանգությունը, Առաջին և Երկրորդ Հանրապետությունների ավանդույթները և ավելի քան հազարամյա պետական ժառանգությունը [**16**]: Հունգարիայի հիմնական օրենքի նախաբանում ևս ընդգծվում են Սուրբ Ստեփանոսի դերը հունգարական պետության ձևավորման գործում, Սուրբ Թագը և պետականության պատմական շարունակականությունը [**17**]: Այս օրինակները ցույց են տալիս, որ ազգային պատմության, մշակույթի և պետականության ժառանգության արտացոլումը սահ-

մանադրական տեքստերում կարող է հանդես գալ որպես պետության ինքնության և արժեքային հիմքերի ամրագրման միջոց:

Ընդհանրապես, սահմանադրական իրավունքի մասնագետները տարբերակում են «սահմանադրական սկզբունքները» և «սահմանադրական պրակտիկան»: Առաջինները՝ օրենքի գերակայությունը, իշխանությունների տարանջատումը և ժողովրդավարությունը, ունեն համընդհանուր նշանակություն, մինչդեռ դրանց իրացումը սահմանադրական պրակտիկայում պայմանավորված է նաև տվյալ պետության ազգային և պատմական համատեքստով: Հետևաբար, սահմանադրագետները, չհրաժարվելով համընդհանուր սկզբունքներից, պետք է հաշվի առնեն իրենց ազգային առանձնահատկությունները, ինչը կարող է նպաստել այդ սկզբունքների ամրապնդմանը [**14**, էջ 463]:

Հայաստանում սահմանադրական գործընթացի հետագա փուլում խնդիր էր դառնում այս գաղափարները համադրել պետական ինստիտուտների կայունության, իշխանության կազմակերպման արդյունավետության և փոփոխվող քաղաքական ու միջազգային պայմաններում պետության գործունակության հետ: Այդ համատեքստում քննարկվում էին կառավարման ձևը, նախագահի և խորհրդարանի լիազորությունների հարաբերակցությունը, կառավարության պատասխանատվությունը, իշխանությունների տարանջատումը, դատական իշխանության անկախությունը և տեղական ինքնակառավարումը:

**Պետական համակարգի վերափոխումը 1995 թ.**

ՀՀ ԳԽ Սահմանադրության մշակման հանձնաժողովը ստեղծվել էր 1990 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ [**11**, էջեր 80–82]: Հանձնաժողովը գլխավորում էր Լևոն Տեր-Պետրոսյանը, տեղակալն էր Վահե Ստեփանյանը: Սկզբում նախատեսվում էր մշակել պառլամենտական և նախագահական հանրապետությունների երկու մոդել, սակայն 1991 թ. նախագահի ինստիտուտի ստեղծումից հետո պառլամենտական տարբերակը «հետին պլան մղվեց» [**1**, էջ 73]: 1992 թ. հոկտեմբերի 15-ին ներկայացվեց Սահմանադրության նախնական նախագիծը, որը դժգոհություն առաջացրեց ընդդիմության շրջանում: 1994 թ. հունիսին հանձնաժողովը համալրվեց՝ տարբեր նախագծերի դրական կողմերը համադրող միասնական նախագիծ մշակելու նպատակով: Վ. Նազարյանի բնորոշմամբ՝ աշխատանքն ընթանում էր «պետականագիտական և սահմանադրական մտածողության զարթոնքի» պայմաններում [**12**, էջ 45]: 1995 թ. մայիսի 12-ին ԳԽ-ն հավանություն տվեց վերամշակված նախագծին:

1995 թ. հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրությունը դարձավ անկախության առաջին տարիներին ձևավորված պետական համակարգի իրավական ամրագրման և կառուցվածքային վերափոխման հիմնական հանգրվանը: Այն Հայաստանի Հանրապետությունը հռչակեց ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, իսկ իշխանության աղբյուրը՝ ժողովուրդը: Սահմանվեցին Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության և դատական իշխանության կարգավիճակն ու փոխհարաբերությունները:

Կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում նոր համակարգի առանցքային առանձնահատկությունը նախագահի դիրքի ամրապնդումն էր: Նախագահը դարձավ պետական իշխանության կենտրոնական ինստիտուտ՝ օժտվելով լայն լիազորություններով: Փոփոխվեց նաև օրենսդիր իշխանության կարգավիճակը: Գերագույն խորհուրդը վերանվանվեց Ազգային ժողով: Սա պարզապես անվանափոխություն չէր. խորհրդային ներկայացուցչական մարմնի փոխարեն ձևավորվում էր իշխանությունների տարանջատման համակարգի բաղադրիչ հանդիսացող օրենսդիր ինստիտուտ՝ սահմանադրորեն ամրագրված լիազորություններով: Կառավարությունը սահմանադրորեն առանձնացվեց որպես պետական իշխանության բաղադրիչ, ամրագրվեցին վարչապետի և նախարարների ինստիտուտները, ինչպես նաև կառավարության և Ազգային ժողովի փոխհարաբերությունների հիմքերը: Դատական իշխանությունը ստացավ առանձին սահմանադրական կարգավիճակ՝ համապատասխան մարմիններով և իրավասություններով: Այսպիսով, պետական իշխանության կազմակերպումը կառուցվեց իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա:

Նախասահմանվեց նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգը: Մարզերում նախատեսվեց պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում: Դրա ամբողջական գործարկումը պահանջում էր հետագա օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ: Մինչև համապատասխան օրենքի ընդունումը և նոր մարմինների կազմավորումը՝ 1995 թ. դեկտեմբերին ընդունված անցումային օրենքով գործող գյուղական ու քաղաքային խորհուրդներին և դրանց գործադիր մարմիններին թույլատրվեց շարունակել իրենց լիազորությունների իրականացումը:

Այսպիսով, 1995 թ. Սահմանադրությամբ ձևավորվեց պետական իշխանության կազմակերպման նոր մոդել՝ ինքնիշխանության, ժողովրդի իշխանության, իշխանությունների տարանջատման, իրավական պետության և պետական ու տեղական կառավարման տարբե-

րակման սկզբունքների հիման վրա: Այն պետք է դիտարկել որպես 1990–1995 թթ. ընթացող պետականաշինության գործընթացի սահմանադրական հանգուցալուծում:

Միաժամանակ Սահմանադրությունը կարևոր նշանակություն ունեցավ ազգային պետականության հայեցակարգերի տեսանկյունից: Նախաբանում Անկախության հռչակագրում հաստատագրված «*հայոց պետականության հիմնարար սկզբունքներին և համազգային նպատակներին*» արված հղումը ցույց էր տալիս, որ նոր պետական համակարգը չէր տարանջատվում անկախության ազգային-պատմական հիմքերից: Սակայն ազգային բաղադրիչը հիմնականում ամրագրվեց որպես սահմանադրական ինքնության և արժեքային հիմքի մաս, մինչդեռ պետական իշխանության կազմակերպումը կառուցվեց ժամանակակից սահմանադրական պետությանը բնորոշ ինստիտուցիոնալ սկզբունքներով:

1992–1995 թթ. սահմանադրական գործընթացը, հետևաբար, ոչ միայն իրավական համակարգի ձևավորման, այլև ազգային-պետական գաղափարների ընտրության և վերահմաստավորման գործընթաց էր: Դրա արդյունքում ազգային-պատմական և համահայկական նպատակների զգալի մասը չվերածվեց ուղղակի սահմանադրական նորմերի, այլ վերաձևակերպվեց որպես պետականության արժեքային և ինքնության հիմք, մինչդեռ իշխանության կազմակերպումը կառուցվեց ժամանակակից սահմանադրական ինստիտուտների սկզբունքների վրա:

**Վերջաբան**

1990–1995 թթ. Հայաստանի սահմանադրական գործընթացը միաժամանակ ազգային պետականության գաղափարի վերահմաստավորման և անկախ պետական համակարգի ձևավորման գործընթաց էր: Այլընտրանքային նախագծերի համադրությունը ցույց է տալիս, որ «ազգային պետություն» հասկացությունը միասնական մեկնաբանություն չուներ. այն ներառում էր պատմական հիշողությունը, ազգային ինքնությունը, Սփյուռքի և Արցախի խնդիրները, Հայ դատը և պատմական հայրենիքի գաղափարը: Հետևաբար, սահմանադրական քննարկումների առանցքում ոչ միայն ապագա պետության իրավական կառուցվածքն էր, այլև այն հարցը, թե ինչ ազգային և պատմական բովանդակություն պետք է ունենար այդ պետությունը:

1995 թ. Սահմանադրությունը այդ մոտեցումների ամբողջական վերարտադրությունը չեղավ: Այն ազգային-պատմական բաղադրիչը կապեց Անկախության հռչակագրի հիմնարար սկզբունքների և համազգային նպատակների հետ, մինչդեռ պետական համակարգը կառուցեց իշխանությունների տարանջատման, իրավական պետության, ներկայացուցչական իշխանության և պետական ու տեղական կառավարման տարբերակման սկզբունքների վրա: Այսինքն՝ ազգային գաղափարների սահմանադրականացումը հիմնականում իրականացվեց ոչ թե առանձին քաղաքական-պատմական պահանջները ուղղակիորեն իրավական նորմերի վերածելու, այլ դրանք պետության սահմանադրական ինքնության և արժեքային հիմքի մեջ ներառելու միջոցով:

1995 թ., հետևաբար, կարելի է դիտարկել որպես այն փուլի հանգուցալուծում, երբ ազգային-ազատագրական շարժման գաղափարական ժառանգությունը վերաձևավորվում էր պետական ինստիտուտների տրամաբանությամբ: Սահմանադրական նախագծերից մինչև ընդունված Սահմանադրություն անցումը ցույց է տալիս, որ Հայաստանի պետական համակարգի վերափոխումը ոչ միայն իրավական կառույցների փոփոխություն էր, այլև ազգային պետականության պատմական պատկերացումները անկախ պետության ինստիտուցիոնալ և սահմանադրական պահանջներին համապատասխանեցնելու գործընթաց:

**Օգտագործված գրականության ցանկ**


**Արխիվային փաստաթղթեր՝**

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 207, ցուցակ 64, գործ 165:
2. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 173:
3. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 174:
4. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 177:
5. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 175:
6. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 164:
7. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 188:
8. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 192:
9. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 199:
10. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 200:
11. ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 19:
12. ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 443:

**Օգտագործված գրականություն**

13. **Halász, I.** The Central European history in constitutional preambles: state narrative and governance implications. // Journal of Contemporary Central and Eastern Europe, 2024, 32(1), 131–148. https://doi.org/10.1080/25739638.2024.2319995
14. **William Partlett, Dinesha Samararatne.** Redeeming the National in Constitutional Argument. *Verfassung und Recht in Übersee / Law and Politics in Africa, Asia and Latin America* , Vol. 54, No. 4 (2021), pp. 461-484 https://www.jstor.org/stable/27304163

**Էլեկտրոնային ռեսուրսներ**

15. Իռլանդիայի Հանրապետության Սահմանադրություն https://shirakcentre.am/hy/constitution/2015/16/
16. Լեհաստանի Հանրապետության Սահմանադրություն https://www.wipo.int/wipolex/ru/legislation/details/17577
17. Հունգարիայի Հանրապետության Սահմանադրություն https://www.constituteproject.org/constitution/Hungary_2016


*Сдана / Հանձնվել է՝* 24.08.2026
*Рецензирована / Գրախոսվել է՝* 31.08.2026
*Принята / Ընդունվել է՝* 07.09.2026